Սոցիալական Ապահովության Համարներ Երեխաների Համար

Բովանդակություն

Ինչո՞ւ ես պետք է իմ երեխայի համար Սոցիալական Ապահովության համար ստանամ՝	1
Արդյո՞ք իմ երեխան պարտավոր է ունենալ Սոցիալական Ապահովության համար՝	2
Քաղաքացիություն՝	3
Տարիք՝	3
Ինքնություն՝	3
Եթե իմ երեխան որդեգրված է՝	4
Որքա՞ն դա կարժենա՝	4
Ի՞նչ կլինի եթե ես կորցնեմ քարտը՝	4
Սոցիալական Ապահովության քարտի չարաշահում՝	5
Կապ Հաստատել Սոցիալական Ապահովության Ծառայության հետ	5

Ձեր երեխայի ծնվելուց հետո, Ձեր կողմից կատարվելիք կարևոր գործողություններից մեկը նրա համար Սոցիալական Ապահովության համար ստանալն է: Կարող եք դա անել քանի դեռ հիվանդանոցում եք գտնվում՝ երեխայի ծննդյան վկայականի համար տեղեկատվություն տրամադրելու հետ մեկտեղ: Եթե համարը ստանալու համար սպասեք և դիմեք Սոցիալական Ապահովության գրասենյակում, հնարավոր է որոշակի ուշացումներ լինեն մինչև մենք հավաստենք Ձեր երեխայի ծննդյան վկայականը:

Ինչո՞ւ ես պետք է իմ երեխայի համար Սոցիալական Ապահովության համար ստանամ՝

Ձեզ Սոցիալական Ապահովության համարը անհրաժեշտ է, որպեսզի եկամտահարկի հայտարարագրում Ձեր երեխային ներկայացնեք որպես Ձեր խնամարկյալ: Ձեր երեխային նաև անհրաժեշտ կլինի Սոցիալական Ապահովության համար, եթե մտադիր եք՝

- Բանկային հաշիվ բացել Ձեր երեխայի համար;

- Խնայողական պարտատոմսեր (savings bonds) գնել Ձեր երեխայի համար;
- Բժշկական ապահովագրության ծածկույթ ձեռք բերել Ձեր երեխայի համար;
- Դիմել երեխային տրամադրվող պետական ծառայությունների համար:

Արդյո՞ք իմ երեխան պարտավոր է ունենալ Սոցիալական Ապահովության համար՝

Ո՛չ: Ձեր նորածնի համար Սոցիալական Ապահովության համար ստանալը կամավոր է: Սակայն, Ձեր երեխայի ծնունդից անմիջապես հետո համար ստանալը շատ լավ գաղափար է: Ձեր երեխայի Սոցիալական Ապահովության համարի համար կարող եք դիմել միաժամանակ ծննդյան վկայականի համար դիմելիս: Ծննդյան վկայական տրամադրող պետական գործակալությունը Ձեր երեխայի վերաբերյալ տեղեկատվությունը կտրամադրի մեզ և մենք Ձեզ փոստով կառաքենք Սոցիալական Ապահովության քարտը:

Եթե սպասեք և հետո դիմեք Սոցիալական Ապահովության գրասենյակ, ապա Ձեզ անհրաժեշտ կլինի ներկայացնել Ձեր երեխայի ԱՄՆ քաղաքացիությունը, տարիքը և ինքնությունը հավաստող փաստաթղթեր, ինչպես նաև Ձեր անձնական ինքնությունը հավաստող փաստաթղթեր: Մենք պետք է ստուգենք Ձեր երեխայի ծննդյան վկայականի տվյալները, ինչը կարող է լրացուցիչ 12 շաբաթով հետաձգել քարտի թողարկումը: Ծննդյան վկայականը հավաստելու նպատակով Սոցիալական Ապահովությունը կդիմի այդ վկայականը թողարկած գրասենյակին: Մենք կատարում ենք այս ստուգումը, որպեսզի կանխենք մարդկանց կողմից կեղծ ծննդյան տվյալների օգտագործմամբ՝ կեղծ ինքնությունների ստեղծումը Սոցիալական Ապահովության համարներ ստանալու միջոցով:

Ինչպե՞ս եմ ես դիմելու՝

Հիվանդանոցում. Ձեր երեխայի ծննդյան վկայականի համար տեղեկատվություն տրամադրելիս՝ Ձեզ կհարցնեն, թե արդյո՞ք Դուք ցանկանում եք դիմել Ձեր երեխայի Սոցիալական Ապահովության համարը ստանալու համար: Եթե Դուք պատասխանում եք «aux», ապա Դուք պետք է տրամադրեք երկու ծնողների Սոցիալական Ապահովության համարները, եթե կարող եք: Նույնիսկ եթե Դուք չգիտեք երկու ծնողների Սոցիալական Ապահովության համարները, միևնույնն է կարող եք դիմել Ձեր երեխայի Սոցիալական Ապահովության համար ստանալու համար:

Սոցիալական Ապահովության գրասենյակում. եթե սպասում եք Ձեր երեխայի համարը ստանալու դիմելուն, ապա Դուք պետք է՝

- Լրացնե՛ք *Սոցիալական Ապահովության Քարտի Դիմումը* (Ձեւաթուղթ SS-5-INST-AM); և
- Ներկայացնե՛ք բնօրինակ փաստաթղթեր, որոնք կհավաստեն Ձեր երեխայի՝
  - — ԱՄՆ քաղաքացիությունը;
  - — Տարիքը; և
  - — Ինքնությունը
- Ներկայացնե՛ք Ձեր ինքնությունը հավաստող փաստաթղթեր:

ՆՇՈՒՄ. *որոշ տեղամասերում, փոստային ծառայությունը չի առաքի Ձեր երեխայի քարտը, եթե երեխայի անունը նշված չլինի փոստարկղի վրա:*

12 տարեկան և ավելի երեխաների դեպքում. 12 տարեկան և ավելի բարձր յուրաքանչյուր ոք, ով դիմում է բնօրինակ Սոցիալական Ապահովության համար ստանալու համար, պետք է անձամբ ներկայանա հարցազրույցի, անգամ եթե ծնողը կամ խնամակալը ստորագրում են դիմումը նրա անունից:

(շրջել)

Քաղաքացիություն՝

Մենք կարող ենք ընդունել միայն որոշ տեսակի փաստաթղթեր, որոնք կարող են հանդես գալ որպես ԱՄՆ քաղաքացիության հավաստիք: Դրանց թվում են ԱՄՆ ծննդյան վկայականը, ԱՄՆ հյուպատոսական ծառայության կողմից ծնունդի արձանագրությունը, ԱՄՆ անձնագիրը, Հպատակագրման Վկայականը (Certificate of Naturalization) կամ Քաղաքացիության Վկայականը: Ոչ-քաղաքացիները՝ լրացուցիչ տեղեկատվության համար պետք է ծանոթանան *Սոցիալական ապահովության համարներ՝ ոչ-քաղաքացիների համար* (Հրատարակություն թիվ 05-10096-AM):

Տարիք՝

Եթե Ձեր երեխան ծնվել է Միացյալ Նահանգներում, Ձեզ անհրաժեշտ է ներկայացնել Ձեր երեխայի ծննդյան վկայականը: (Առկայության դեպքում, Դուք այն պետք է ներկայացնեք): Եթե ծննդյան վկայականը առկա չէ, ապա մենք կարող ենք ընդունել՝

- Կրոնական գրանցումը, որը կատարվել է մինչև 5 տարեկանը՝ ծննդյան տարեթվի նշումով;
- ԱՄՆ հիվանդանոցի ծննդյան մասին գրանցումը; կամ
- Անձնագիրը:

Եթե Ձեր երեխան ծնվել է ԱՄՆ –ից դուրս, Ձեզ անհրաժեշտ է ներկայացնել Ձեր երեխայի արտասահմանյան ծննդյան վկայականը (առկայության դեպքում կամ եթե կարողանաք կրկնօրինակը ձեռք բերել 10 աշխատանքային օրվա ընթացքում): Եթե ծննդյան վկայականը առկա չէ, ապա մենք կարող ենք ընդունել Ձեր երեխայի՝

- Certificate of Birth Abroad (FS-545, Արտասահմանյան Ծննդյան Վկայականը);
- Certicate of Report of Birth (DS-1350, Ծննդյան Արձանագրության Վկայականը);
- Consular Report of Birth Abroad (FS-240, Արտասահմանում Հյուպատոսական ծառայության կողմից ծնունդի արձանագրությունը;
- Certificate of Naturalization (Հպատակագրման Վկայականը); կամ
- Անձնագիրը:

Ինքնություն՝

Ձեր երեխան. որպես Ձեր երեխայի ինքնության հաստատում մենք կարող ենք ընդունել միայն որոշակի փաստաթղթեր: Ընդունելի փաստաթուղթը պետք է լինի վավերական (ոչ ժամկետանց) և ցույց տա Ձեր երեխայի անունը, ինքնությունը հաստատող տեղեկատվություն և ցանկալի է կրի նրա վերջին լուսանկարներից: Ընդհանուր առմամբ, մենք կարող ենք ընդունել ինքնությունը հաստատող առանց լուսանկարի փաստաթուղթ, եթե այն պարունակում է երեխայի ինքնությունը հաստատող բավարար տեղեկատվություն (օրինակ՝ ինչպես երեխայի անունն ու տարիքը, ծննդյան տարեթիվը կամ ծնողների անունները): Մենք նախընտրում ենք տեսնել երեխայի ԱՄՆ անձնագիրը: Եթե տվյալ փաստաթուղթը հասանելի չէ, մենք կարող ենք ընդունել երեխայի՝

- Նահանգի կողմից տրված ինքնությունը հաստատող ոչ-վարորդական քարտը (State-issued non-driver identification card);
- Որդեգրման հրամանագիրը;
- Բժիշկի, բուժարանի կամ հիվանդանոցի գրանցումը;
- Կրոնական գրանցումը;
- Դպրոցի կամ մանկական խնամքի կենտրոնի գրանցումը; կամ
- Ինքնությունը հաստատող դպրոցական քարտը (School identification card):

Դուք. եթե Դուք ԱՄՆ քաղաքացի եք, ապա Սոցիալական Ապահովության ծառայությունը կարող է պահանջել, որպեսզի ներկայացնեք Ձեր ԱՄՆ վարորդական իրավունքը, նահանգի կողմից տրված ինքնությունը

(շրջել)

հաստատող ոչ-վարորդական քարտը կամ ԱՄՆ անձնագիրը՝ որպես Ձեր ինքնությունը հաստատող փաստաթղթեր: Եթե Դուք չունեք տվյալ փաստաթղթերը, մենք կարող ենք ընդունել այլ փաստաթղթեր, որոնք կարող են հասանելի լինել՝

- Ինքնությունը հաստատող աշխատանքային քարտը;
- Ինքնությունը հաստատող դպրոցական քարտը;
- Առողջության ապահովագրության քարտը (ոչ Medicare-ի քարտը).
- ԱՄՆ ինքնությունը հաստատող զինվորական քարտը; կամ
- Կյանքի ապահովագրության վկայագիրը:

Բոլոր փաստաթղթերը պետք է լինեն բնօրինակ կամ դրանք թողարկած գործակալությունների կողմից վավերացված կրկնօրինակներ: Մենք չենք կարող ընդունել պատճեներ կամ նոտարական հաստատումով փաստաթղթերի կրկնօրինակներ: Մենք կարող ենք մեկ փաստաթուղթը օգտագործել երկու նպատակով: Օրինակ, մենք կարող ենք Ձեր երեխայի անձնագիրը օգտագործել որպես քաղաքացիության և ինքնության հավաստիք: Կամ, մենք կարող ենք Ձեր երեխայի ծննդյան վկայականը օգտագործել որպես Ձեր երեխայի տարիքի և քաղաքացիության հավաստիք: **Այնուամենայնիվ, դուք պետք է ներկայացնեք առնվազն երկու տարբեր փաստաթուղթ:**

Մենք փոստով կառաքենք Ձեր երեխայի Սոցիալական Ապահովագրության համարն ու քարտը Ձեր երեխայի վերաբերյալ ողջ անհրաժեշտ տեղեկատվությունը ստանալուց և փաստաթղթերը հավաստագրելուց հետո:

Եթե իմ երեխան որդեգրված է՝

Մենք կարող ենք Սոցիալական Ապահովության համար շնորհել Ձեր որդեգրած երեխային՝ նախքան որդեգրման գործընթացի ավարտը, սակայն Դուք կարող է ցանկանաք սպասել: Այդ ժամանակ, Դուք կարող եք դիմել համարը ստանալու համար՝ օգտագործելով երեխայի նոր անունը և Ձեր անունը որպես ծնող: Եթե ցանկանում եք Ձեր երեխային ներկայացնել հարկային հայտարարագրում, մինչդեռ որդեգրումը ընթացքի մեջ է, ապա Դուք պետք է դիմեք Հարկային Վարչություն (IRS) W-7A Ձևաթղթի համար,*ԱՄՆ Որդեգրման Գործընթացում Հարկ Վճարողի Ինքնության Համար Սստանալու Դիմում (Application for Taxpayer Identification Number for Pending U.S. Adoptions)*:

Որքա՞ն դա կարժենա՝

Սոցիալական Ապահովության համար ու քարտ ստանալը անվճար է: Եթե որևէ մեկը կապ հաստատի Ձեզ հետ և ցանկանա որևէ գումար գանձել Սոցիալական Ապահովության համար կամ քարտ ստանալու համար, ապա հիշե՛ք, որ Սոցիալական Ապահովության այդ ծառայությունները անվճար են: Դուք կարող եք զեկուցել գումար գանձելու փորձ կատարող որևէ մեկի մասին՝ զանգահարելով Գլխավոր Դատախազության Գրասենյակի (Office of the Inspector General) թեժ գծի հեռախոսահամարով **1-800-269-0271** (TTY **1-866-501-2101** խուլ կամ ծանր լսողություն) ժամը 10: 00-ից. ժամը 4: 00-ն է: Արեւելյան ժամը կամ այցելեք ***http://oig.ssa.gov/report***:

Ի՞նչ կլինի եթե ես կորցնեմ քարտը՝

Դուք կարոլ եք փոխարինել Ձեր Սոցիալական Ապահովության քարտը դրա կորստի կամ գողության դեպքում: Սակայն Դուք ունեք դա անելու սահմանափակ հնարավորություն. մեկ տարվա ընթացքում մինչև 3 փոխարինում, իսկ ողջ կյանքի ընթացքում մինչև 10 փոխարինում: Անվան օրինական փոփոխությունների և այլ բացառությունների դեպքերը չեն ենթադրվում այդ սահմանափակման մեջ: Օրինակ, ոչ-քաղաքացու կարգավիճակի փոփոխությունները, որոնք պահանջում են քարտի թարմացում, չեն կարող ներառվել նշված սահմանափակման մեջ: Ինչպես նաև, Դուք կարող եք խուսափել նշված

(շրջել)

սահմանափակումից, եթե կարողանաք ապացուցել, որ քարտը Ձեզ անհրաժեշտ է լուրջ դժվարությունների կանխարգելման համար:

Ձեր երեխայի Սոցիալական Ապահովության քարտը շատ կարևոր փաստաթուղթ է: Խորհուրդ ենք տալիս պահպանել այն որևէ ապահով տեղում: **Մի կրեք այն Ձեզ հետ:**

Սոցիալական Ապահովության քարտի չարաշահում՝

Եթե Դուք կարծում եք, որ որևէ մեկը օգտագործում է Ձեր երեխայի Սոցիալական Ապահովության համարը խարդախ նպատակներով, ապա Դուք պետք է բողոքի հայտ ներկայացնեք Դաշնային Առևտրային Հանձնաժողովին (Federal Trade Commission) հետևյալ եղանակներով՝

- Համացանցով՝ ***www.identitytheft.gov***;
- Զանգահարելով՝ **1-877-IDTHEFT** (**1-877-438-4338**); կամ
- TTY (լսողության խնդիրների դեպքում)՝ **1-866-653-4261** հեռախոսահամարներով:

Անօրինական է՝

- Օգտագործել ուրիշին պատկանող Սոցիալական Ապահովության համարը;
- Տրամադրել կեղծ տեղեկատվություն քարտ ստանալու համար դիմելիս; կամ
- Փոփոխել, գնել կամ վաճառել Սոցիալական Ապահովության քարտը:

Կապ Հաստատել Սոցիալական Ապահովության Ծառայության հետ

Կան Սոցիալական Ապահովության Ծառայության հետ կապ հաստատելու տարբեր միջոցներ, այդ թվում առցանց, հեռախոսով և անձնապես: Մենք այստեղ ենք՝ Ձեր հարցերին պատասխանելու և Ձեզ սպասարկելու նպատակով: Ավելի քան 80 տարվա ընթացքում, Սոցիալական Ապահովությունը օգնում է ապահովելու այսօրվա և վաղվա օրը՝ միլիոնավոր մարդկանց տրամադրելով նպաստներ և ֆինանսական աջակցություն՝ իրենց կյանքի ճանապարհին:

Այցելե՛ք մեր կայքէջը՝

Ցանկացած վայրից և ցանկացած ժամանակ Սոցիալական Ապահովության գործնեություն վարելու ամենահարմար եղանակը դա մեր՝ ***www.socialsecurity.gov*** կայքէջը այցելելն է: Այնտեղ Դուք կարող եք՝

- Ստեղծել *my* Social Security account (իմ Սոցիալական Ապահովություն անձնական էջը)՝ Ձեր *Social Security Statement* (*Սոցիալական Ապահովության հաշվետվությունը*) դիտելու, Ձեր հասույթը հավաստելու, նպաստների հավաստագրության նամակը տպելու, Ձեր ուղղակի փոխանցման (direct deposit) վերաբերյալ տեղեկատվությունը փոխելու, Ձեր Medicare-ի քարտի փոխարինում հայցելու, SSA-1099/1042S փոխարինում ստանալու նպատակով և ավելին;
- Դիմել Extra Help (Օժանդակ օգնության) ծրագրին Medicare-ի դեղատոմսով տրամադրվող դեղորայքի ծրագրով նախատեսված ծախսերի համար/
- Դիմել կենսաթոշակի, հաշմանդամության և Medicare-ի նպաստների համար
- Գտնել մեր հրատարակությունների կրկնօրինակները
- Ստանալ պատասխաններ հաճախ տրվող հարցերին և
- Շատ ավելին

Նշված ծառայություններից որոշները հասանելի են միայն անգլերեն լեզվով: Այցելե՛ք մեր Multilanguage Gateway բաժինը (Բազմալեզու էջը) ՝ Հայերեն լեզվով տեղեկատվություն ստանալու համար: Մենք տրամադրում ենք անվճար թարգմանչական ծառայություններ, որպեսզի օգնենք Ձեզ վարելու Ձեր Սոցիալական Ապահովության գործնեությունը: Տվյալ թարգմանչական ծառայությունները հասանելի են անկախ

(շրջել)

նրանից, թե Դուք դիմել եք մեզ հեռախոսով, թե այցելել եք Սոցիալական Ապահովության գրասենյակ:

Հեռախոս

Եթե Դուք չունեք համացանցի (Ինտերնետի) հասանելիություն, ապա հեռախոսի միջոցով մենք շատ ավտոմատացված ծառայություններ ենք առաջարկում՝ օրը 24 ժամ շաբաթը 7 օր: Զանգահարեք մեզ մեր անվճար՝ **1-800-772-1213** հեռախոսահամարով կամ մեր TTY (հեռատիպ)՝ **1-800-325-0778** հեռախոսահամարով՝ լսողության հետ խնդիրներ ունենալու դեպքում:

Եթե Դուք աշխատակցի հետ խոսելու կարիք ունեք, ապա մենք կարող ենք պատասխանել Ձեր զանգերին՝ Երկուշաբթիից Ուրբաթ ժամը առավոտյան 07:00-ից մինչև երեկոյան 19:00-ը: Մենք խնդրում ենք Ձեր համբերատարությունը ծանրաբեռնված շրջաններում, քանի որ Դուք կարող եք ունենալ սովորականից ավելի հաճախ ստացվող ծանրաբեռնվածության ազդանշան և ավելի երկար սպասելաժամանակ մեզ հետ խոսելու համար: Մենք ակնկալում ենք սպասարկել Ձեզ: